**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**

**ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-25/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **07 հունվարի 2026թ.**

2026թ-ի հունվարի 7-ին ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում տեղի ունեցավ պահնորդական ծառայության ձեռքբերման ՀՀՊԾ-ԷԱՃԾՁԲ-25/26 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Իգիթյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Գ. Ղարիբյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ, |
| Կ. Մկրտչյան՝ | ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Իգիթյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 8-ի № 2 արձանագրությամբ հաղթող ճանաչված «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման անհրաժեշտության մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի № 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2026 թվականի հունվարի 7-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ առաջացած հիմնավոր կասկածով պայմանավորված անհրաժեշտ է ստուգել «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը: Մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել պարզելու այն հանգամանքը, թե արդյո՞ք «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ն ունի Ընթացակարգի հրավերով պահանջվող օրենքով սահմանված կարգով զենք պահելու և օգտագործելու համապատասխան թույլտվություն, թե ոչ, ինչպես նաև այլ տվյալներ:

Հիմք ընդունելով վերը նշված փաստական հիմնավորումները, Հանձնաժողովը որոշեց Կարգի 67-րդ կետի կիրառմամբ կասեցնել Ընթացակարգը և ծանուցել մասնակից «ԼԵԳԱԼ 11» ՍՊԸ-ին՝ վերջինիս առաջարկելով մինչև 2026թ. հունվարի 12-ի ժամը 15:00-ն ներառյալ ներկայացնել Ընթացակարգի հրավերին վերջինիս համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում՝

- Պրոբացիայի ծառայությունում ծառայություն մատուցելու դեպքում ներգրավվող պահնորդների ցանկը /անուն, ազգանուն/,
- Նրանց անձնագրերի պատճենները,
- Պահնորդների և պահնորդական կազմակերպության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահնորդական գործունեություն իրականացնելու վերաբերյալ լիցենզիան (որակավորումը) և պահնորդական վկայականների պատճենները,
- Ծառայությունն իրականացնելու դեպքում իրենց կողմից առաջարկվող և տեխնիկական բնութագրում նշված կիրառվող և պահնորդների կողմից կրվող միջոցների ցանկը:
- Ընթացակարգի հրավերով պահանջվող օրենքով սահմանված կարգով զենքի պահելու և օգտագործելու համապատասխան թույլտվությունը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ և ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել 2026 թվականի հունվարի 12-ին ժամը 15:00-ին՝ ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 23/1 հասցեում գտնվող ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Իգիթյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Ղարիբյան ________________

Կ. Մկրտչյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ________________